

«ԼԵՅԼԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ»

Սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերություն

Մետաղների թափոնների
վերամշակման գործարան

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Կատարող՝
«Քոնսեկորդ» ՍՊԸ

Տնօրեն՝ _____ Վ.Թևոյան



Երևան - 2022

Բովանդակություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	3
1.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը	3
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	3
1.3. Իրավական հիմքերը	3
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅՂ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ	5
3.1 Տեղադիրքը	5
3.2 Կլիմայական պայմանները	6
3.3. Օդային ավազան	10
3.4. Ջրային ռեսուրսներ	10
3.5. Հողածածկ	12
3.6. Կենսաբազմազանություն	12
3.7. Սոցիալական պայմանները	12
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	14
3.1. Ընդհանուր տեղեկություններ	14
3.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ	14
3.3. Օգտագործվող բնառեսուրսները	17
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	17
4.1. Հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը	17
4.2. Նախատեսված մեղմացնող միջոցառումները	18
4.3. Արտակարգ և վթարային իրավիճակների, ինչպես նաև բնական աղետների և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ արագ հակազդման միջոցառումներ	18
Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագիր	20

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը

Ձեռնարկողի անվանումը՝

«Լեյլա Խաչատրյան» ՍՊԸ

Գործունեության ոլորտը՝

Թափոնների վերամշակման և գործածության գործունեության ոլորտ:

Գործունեության հասցեն

ՀՀ, Երևան, Էրեբունի վարչական շրջան, Արին Բերդի փողոց 22/1:

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

➤ Նախատեսվող գործունեության անվանումը՝

Գունավոր և սև մետաղների վերամշակում ձուլման եղանակով:

➤ Գործունեության նպատակը՝

Թափոնների տեսքով ընդունվող այլումինի, պղնձի, համաձուլվածքների և պողպատի ջարդոնի վերամշակում՝ ձուլման եղանակով, ապրանքային ձուլակտորների արտադրության նպատակով:

1.3. Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),

7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),

8. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”

9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”

10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթրման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”

11. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված և սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու և ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12.2014 թ-ի N 1524-Ն որոշում,

12. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված և սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման և ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձևերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման և ներմուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

13. <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 30.06.2003թ-ի N 121-Ն որոշում:

Համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դասակարգումների, նախատեսվող գործունեությունը դասվում է <<Ա>> կատեգորիայի և ենթակա է փորձաքննության՝ երկու փուլով:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅՌԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1 Տեղադիրքը

Ներկայացվող գործունեության համար նախատեսված տարածքը գտնվում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի արդյունաբերական շրջանում: Մոտակա բնակելի թաղամասերը գտնվում են մոտավորապես 810 մ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի մոտակա մասնաշենքը՝ 680 մ հեռավորության վրա:

Տեղանքի ռելիեֆը հանգիստ է: Տեղանքի նիշը ծովի մակերևույթից 927մ է:

Սեյսմակայնությունը – 8-9 բալ:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Գեոմորֆոլոգիա

Ներկայացվող տեղանքը գեոմորֆոլոգիական տեսակետից ունի հարթ, որոշակի թեքությամբ ռելիեֆային բնույթ:

Լիթոլոգիական տեսակետից տարածքում կարելի է առանձնացնել հետևյալ երկրաբանական տարբերակները՝

1. Ժամանակակից այուվիալ-պրոլյուվիալ գրունտեր, ներկայացված գորշ կավավազով՝ ամուր կազմության, փթած բույսերի մնացորդներով և արմատներով:

2. Մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

3. Մեծաբեկորային գրունտ, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են մինչև 10% կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով:

4. Վերին չորրորդական լճա-այուվիալ նստվածքներ, ներկայացված խճա-մանրախճային գրունտներով՝ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30 -35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Տարածքում սողանքային երևույթներ չեն դիտարկվել:

Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը ոչ բարենպաստ է սեյսմիկ ազդեցության ժամանակ: Ստորգետնյա ջրերը կապված են միջլավային և լավաների տակ գտնվող հոսքերի հետ, ունեն ինֆիլտրացիոն բնույթ:

Գրունտային ջրերի առկայությունը կավային գրունտերում բացատրվում է ջրհագեցած ավազների բազմաթիվ ենթաշերտերով և ոսպնյակների առկայությամբ, որը հանգեցրել է ստորգետնյա ջրերի ցիրկուլիացիայի բարդ պայմանների և ջրատար հորիզոնների առկայության:

Աշխատանքների տեղանքում գրունտային/ստորգետնյա ջրերի մակարդակը կազմում է 2 – 6 մ:

ՀՀՇՆ II-6.02-2006 'Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր' նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտեվորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

3.2 Կլիմայական պայմանները

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է <<տաք>> կլիմայական գոտում: <<Տաք>> գոտու կլիմայական բնութագրերն են՝ ամառ՝ շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 21 °C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին)՝ 35% ցածր, բարենպաստ լեռնահովտային քամիներ՝ միջին արագությունը 2,0-3,0 մ/վ : Ձմեռ՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0 °C-ց մինչև մինուս 5 °C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին) 60-70%, քամու միջին արագությունը՝ 2,0-3,0 մ/վ:

Քամու փչելու ուղղությունը տատանվում է և գերակա ուղղություն չկա: Հյուսիս- արևելյան և հարավ-արևելյան քամիները ավելի շատ են ապրիլին, հարավ-արևմտյան քամիները՝ հունիսին, հյուսիս-արևելյան քամիները՝ հուլիսին և հյուսիս արևելյանը՝ հուլիսին, հարավ արևելյան քամիները՝ հոկտեմբերին:

Ստորև բերված է տեղանքի իրադրային սխեման /նակր 1/ և կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:



Նկար 1. Տեղանքի իրադրային սխեմա

Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C ⁰												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Էրեբունի	888	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-2.8	42

Աղյուսակ 3.2. Օդի հարաբերական խոնավությունը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Էրեբունի	888	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	67	28

Աղյուսակ 4.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթը, մմ	
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը, մմ	Տարվա ձնածածկույթի օրերը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Էրեբունի	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	58	47
	24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51		

Աղյուսակ 3.4. Քամու պարամետրերը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

1	2	3	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								12	13	14	15	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
			4	5	6	7	8	9	10	11					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Էրեբունի	912.1	Հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0.7	1,5	29	22	27	29
			2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7							
		Ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45	1,9					
			3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6							
		Հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36	2.8					
			5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3							
Հոկտեմբեր	6	17	10	10	21	20	10	5	63	1,0							
	2,9	2,5	2,1	2,5	2,3	2,4	2,9	3,5									

3.3. Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

Երևան քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 դիտակետ և 5 դիտակայան: 2020 թվականին Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները, սակայն տարվա ընթացքում և քաղաքի տարբեր հատվածներում դիտվել են գերազանցումներ: Իրականացված դիտարկումների 21%-ում դիտվել են փոշու, 25%-ում՝ ծծմբի երկօքսիդի, 24%-ում՝ ազոտի երկօքսիդի, 0.9%-ում՝ գետնամերձ օզոնի համապատասխան ՄԹԿ-ներից գերազանցումներ, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերութ- յունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Աղյուսակ 3.10. Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները, 2020թ.

Որոշվող միացություն	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի)	Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ ³	ՄԹԿ միջին օրական, մգ/մ ³
Ծծմբի երկօքսիդ	0.054 (դիտ. N2)	0.012	0.05
Ազոտի երկօքսիդ	0.099 (դիտ. N7)	0.032	0.04
Փոշի	0.563 (դիտ. N1)	0.116	0.15
Գետնամերձ օզոն	0.038 (դիտ. N8)	0.004	0.03

3.4. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

ՀՀ կառավարության կողմից՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ

կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում): ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական՝ մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք (ՋԿՏ)

Հրազդանի ՋԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ- կենցաղային կեղտաջրերը:

2020 թվականին Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 20 դիտակետում, որոնցից 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 25%-ում՝ 3-րդ դաս, 15%-ում՝ 4-րդ դաս և 50%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2020 թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել: Աղտոտված գետերից են Քասախը, Գեղարոտը, Հրազդանը և Գետառը:

Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, մանգանով, նատրիումով և բորով: Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից ներքև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, կալիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և վանադիումով:

«Լեյլա Խաչատրյան» ՍՊԸ նախատեսվող գործունեության տարածքը մոտակա ջրային ռեսուրսից՝ Հրազդան գետից, կազմում է 5.4 կմ:

3.5. Հողածածկ

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Անմիջապես նախատեսվող տարածքում ազատ /բաց/ հողածածկ չկա, ամբողջ տարածքը սալապատ կամ ասֆալտապատ է:

3.6. Կենսաբազմազանություն

Ներկայացվող տեղանքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում, անապատային-կիսաանապատային գոտում:

Այս տարածքում հանդիպող բուսականության տեսակներն են. Մատիտեղ /երկու տեսակ, որոնցից մեկի սերմերի պատիճը ուլունքաշար է, մյուսինը՝ փնջով լոբի/, ուղտափուշ պարսկական, երկտերև, օշինդր, Կապար փշոտ, Իշառվույտ, կովի առվույտ:

Այս տարածքում հացազգիներից գերակշռում է կծմախոտը, կա անապատային սեզ.

Նախատեսվող գարծունեությունը իրականացվելու է արտադրական կազմակերպության տարածքում, Երևանի արդյունաբերական գոտում, որը գուրկ է բնական բուսածածկից:

Կենդանիներից տեղանքում հանդիպում են ողնաշարավորներից, լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշարավորներից՝ անձրևատրդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, փայտօջիլ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր:

Թռչուններ՝ կոնչան բադ, եղեգնահավ, լոր, թխակապույտ աղավնի, կտցարներ:

Անմիջապես ձուլարանի տարածքում և մերձակայքում չկա բնական բուսածածկ և չկան վայրի կենդանիներ:

3.7. Մոցիալական պայմանները

Նախատեսվող տարածքը տեղակայված է Երևանի քաղաքի Էրեբունի վարչական շրջանի արդյունաբերական գոտում:

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատախարական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում:

Բեռնատրանսպորտի աղբյուրներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

Շենգավիթ վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի մարզին:

Տարածքը՝ 4090 հա

Բնակչությունը՝ 137 400 մարդ

Երևան քաղաքի շրջակա միջավայրի պահպանության համաքաղաքային լուծումներն անմիջականորեն կապված են Շենգավիթ վարչական շրջանի և նրա շրջակա միջավայրի վիճակի բարելավման հետ:

Ընդհանուր առմամբ քաղաքի դիտարկվող վարչական շրջանում տեղ են գտել բազմազան հողօգտագործման ձևեր՝ բնակելի կառուցապատում, արդյունաբերական արտադրության համար նախատեսված գոտիներ, հատուկ նշանակության հողեր, հասարակական նշանակության կանաչ զանգվածներ, լանդշաֆտային գոտի, կոմերցիոն բնույթի օբյեկտներով կառուցապատված գոտի, բուժառողջարարական հաստատություններ, ուսումնական հատուկ նշանակության օբյեկտներ և այլն:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Ընդհանուր տեղեկություններ

Ներկայացվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի արդյունաբերական գոտում: Այդ նպատակով Էրեբունի փողոց, 22/1 հասցեում վարձակալված է արտադրական շինություն: Վարձակալության պայմանագրի պատճենը և Պետական ռեգիստրի գրանցամատյանում գրանցման քաղվածքը կցվում են սույն հայտին: Շինությունը տեղակայված է Հուսիկ Սամվելի Մանուկյանին պատկանող արտադրական տարածքում /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրացման վկայականի պատճենը կցվում է սույն հայտին/:

Հ.Մանուկյանի արտադրական տարածքում ներկայում գործունեություն չի իրականացվում: Տարածքի շրջակայքում գտնվում են այլ գործող և չգործող արտադրական տարածքներ և շինություններ:

3.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

Որպես հումք օգտագործվելու են պղնձի, ալյումինի, արույրի և բրոնզի թափոնները, որոնք գնվելու են բնակչությունից և կազմակերպություններից: Մատակարարումը կատարվելու է մատակարարների տրանսպորտային միջոցներով:

Հումքը իր բնութագրերով համապատասխանում է ՀՀ բնապահպանության /ներկայում՝ շրջակա միջավայրի/ նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանով հաստատված «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» հետևյալ թափոնատեսակներին, թեկուզ չի պարունակում փոշի և հիմնականում կենցաղային ծագման է.

35410111 01 00 4	Չտեսակավորված պղնձե ձուլվածքներ պարունակող թափոններ (այդ թվում՝ պղնձե ձուլվածքների փոշի)	Կոշտ	Արտադրության և սպառման թափոններ
35410311 01 00 4	Չտեսակավորված արույր պարունակող թափոններ (այդ թվում՝ արույրի փոշի)	Կոշտ	Մետաղամշակում, գլոցվածքի արտադրություն և կիրառում
35310111 01 00 4	Չտեսակավորված ալյումին պարունակող թափոններ (այդ թվում՝ ալյումինի փոշի)	Կոշտ	Մետաղագործություն, գլոցվածքի արտադրություն, կիրառում
35410211 01 00 4	Չտեսակավորված բրոնզ պարունակող թափոններ (այդ թվում՝ բրոնզի փոշի)	Կոշտ	Մետաղամշակում, գլոցվածքի արտադրություն և կիրառում

Արտադրամասում տեղադրվելու են 2 ինդուկցիոն (էլեկտրական) վառարաններ 3 տ/ժամ արտադրողականությանմ յուրաքանչյուրը, որոնք աշխատելու են հաջորդաբար: Չուլման նախատեսվող արտադրողականությունները հետևյալն են.

- պղնձի թափոն՝ 700 տ/տարի,
- ալյումինի թափոն՝ 1180 տ/տարի,

- արույրի թափոն՝ 700 տ/տարի,
- պողպատի թափոն՝ 400 տ/տարի:

Վառարանները համալրվելու են հովացման շրջանառու համակարգով, օդամղիչով և թևքային գոտիչով:

Թևքային գոտիչի տեխնիկական ցուցանիշները.

- մաքրվող գազաօդային արտահոսքի ծավալը՝ 11520 – 12480 մ³/ժամ,
- գտման մակերեսը՝ 160 մ²,
- գոտիչի չափերը՝ 1880x3590x4200 mm


Վարձակալված տարածքը ապահովված է ջրամատակարարման, կոյուղու և էլեկտրամատակարարման համակարգերով: Տարածքը գտնվում է Արին Բերդ փողոցի մոտ, որով կտեղափոխվեն թափոնները և արտադրանքը:

Մետաղական թափոնների վերամշակումը կատարվելու է ձուլման եղանակով: Այդ նպատակով շինությունում տեղադրվելու են 2 ինդուկցիոն (էլեկտրական) վառարաններ՝ 3 տ/ժամ արտադրողականությանը յուրաքանչյուրը, որոնք աշխատելու են հաջորդաբար:

Ձուլման նախատեսվող արտադրողականությունները հետևյալն են.

- պղնձի թափոն՝ 700 տ/տարի,
- ալյումինի թափոն՝ 1180 տ/տարի,
- արույրի թափոն՝ 700 տ/տարի,
- պողպատի թափոն՝ 400 տ/տարի:

Վառարանների էլեկտրասնուցումը ապահովվելու նպատակով նախատեսվում է տեղադրել 600 կՎ հզորությամբ տրանսֆորմատոր:




Նկար 2. Ինդուկցիոն վառարանը և կառավարման հանգույցը

Վառարանները համալրվելու են հովացման շրջանառու համակարգով, օդամղիչով և թևքային գոտիչով:

Թևքային գոտիչի տեխնիկական ցուցանիշները.

- մաքրվող գազաօդային արտահոսքի ծավալը՝ 11520 – 12480 մ³/ժամ,
- գտման մակերեսը՝ 160 մ²,
- գոտիչի չափերը՝ 1880x3590x4200 մմ:



Նկար 3. Թերային գոտիչների պատկերները

Վառարանների հովացումը կատարվելու է շրջանառու ջրային եղանակով, որը ապահովվելու է CVC Tower տեսակի համակարգով:



Նկար 4. Հովացման համակարգ /շիվեր/

Վարձակաված տարածքը ապահովված է ջրամատակարարման, կոյուղու և էլեկտրամատակարարման համակարգերով: Տարածքը գտնվում է Արին Բերդ փողոցի մոտ, որով կտեղափոխվեն թափոնները և արտադրանքը:

Մետաղների ջարդոնը ընդունվելու է մի քանի օրվա պաշարի հաշվարկով, քանի որ այն պահվելու է շինության ներքին մասում, սահմանափակ տարածքի վրա, ընդ որում յուրաքանչյուր մետաղի տեսակի համար կստեղծվեն ատանձին կույտեր:

Դա նաև նախընտրելի է արտադրական գործընթացները կառավարելու տեսակետից:

Երկու վառարաններից մեկը կօգտագործվի երկաթի թափոննի ձուլման համար, իսկ մյուսը այլումինի, պղնձի և արույթի թափոնների համար՝ հաջորդաբար:

Յուրաքանչյուր բեռնումից առաջ վառարանները կնախապատրաստվեն, կմիացվի ջերմային ռեժիմը և ըստ արտադրող կազմակերպությունների շահագործման ձեռնարկի ցուցանիշների կկատարվի մետաղների բեռնումը:

Հավված և մաքրված մետաղը լցվելու է հատուկ կաղապարների մեջ և բնական եղանակով հովանալուց հետո տեղափոխվելու է պահեստմ որտեղից կառաքվի գնորդ կազմակերպություններին:

Կաղապարները լինելու են թուջից պատրաստված, ինչը թույլ կտա գործնականում առանց փոխարինման շահագործել դրանք:

3.3. Օգտագործվող բնառեսուրսները

Գործունեության ընթացքում օգտագործվելու է ջուր, վառարանների հովացման, ինչպես նաև աշխատակազմի կենցաղային նպատակների համար:

Ըստ նախնական գնահատման յուրաքանչյուր վառարանի հովացման համակարգի ծավալը կկամգի 3.0 մ³, կորուստը՝ 5 %/օր: Ընդամենը առավելագույն օրական՝ 0.3 մ³:

Ջրամատակարարումը կիրականացվի քաղաքային ջրատարից:

Խմելու կենցաղային նպատակներով օրական ջրապահանջը կկազմի՝ 0.2 – 0.3 մ³:

Կենցաղային կեղտարևերը միացված են Վեոլիա ընկերության քաղաքային կոյուղու ցանցին:

Ջրօգտագործման ստույգ ծավալները կներկայացվեն ՇՄԱՀ հաշվետվության կազմում:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՄԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՌԻՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

4.1. Հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը

Նախատեսվող գործունեության հիմնական ռիսկերը կապված են օգտագործվող թափոնների հետ գործակցության և վառարանների ջերմային ռեժիմի ազդեցության հետ:

Մետաղների ջարդոնի հետ աշխատանքը պարունակում ռիսկեր սպասարկող անձնակազմի համար:

Վառարանների շահագործման ընթացքում առաջանում են ծխագազեր, որոնք պարունակում են վտանգավոր նյութեր, մասնավորապես ազոտի և ածխածնի օքսիդներ և պինդ մասնիկներ: Արտանետումների ստույգ քանակները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվությունում:

Հումքի և արտադրատեսակների տեղափոխությունը նախատեսված է ավտոբանասպորտային միջոցներով, ինչը կինտենսիվացնի ճանապարհային երթևեկությունը: Սակայն հաշվի առնելով արտադրողականության ցածր աստիճանը, բեռնափոխադրումների ծավալները էական չեն լինի:

4.2. Նախատեսված մեղմացնող միջոցառումները

Նախատեսվող գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա բացառելու և նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մետաղի պահեստավորել հատուկ հատկացված պահեստային տեղամասերում
- Վառարանները կահավորել բազմաստիճան մաքրման հարմարանքներով՝ թևքային զտիչներով
- Վառարանների հովացման համար կիրառվելու է փակ շրջանառու համակարգ
- Արտադրական հանգույցը պետք է ունենա հակահրդեհային համակարգ
- Պարբերաբար նախատեսվում է իրականացնել բանվորական միջավայրի, դեֆլեկտորների և վառարանային հանգույցի մոնիթորինգ և անհրաժեշտության դեպքում՝ սարքավորումների կարգաբերում
- Թափոնների հետ աշխատելիս անձնակազմը կրելու է հատուկ անհատական պաշտպանիչ միջոցներ՝ ձեռնոցներ, դիմակներ և արտահագուստ
- Սպասարկող անձնակազմը անցնելու է նախնական և պարբերական հրահանգավորում:

Նախատեսվող միջոցառումները և դրանց կատարումը վերահսկող միջոցառումները բերված են աղյուսակի տեսքով:

4.3. Արտակարգ և վթարային իրավիճակների, ինչպես նաև բնական աղետների և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ արագ հակազդման միջոցառումներ

Ձուլարանի շահագործման ժամանակ հնարավոր են վթարային իրավիճակներ, ինչպես նաև բնական աղետներ և անբարենպաստ օդերևութային պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար «Լեյլա Խաչատրյան» ՍՊԸ ձուլարանի համար մշակված է գործողությունների ծրագիր, որը ներառում է հետևյալ միջոցառումները.

- Բնական աղետների ժամանակ (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն) կլինիկական թափոնների այրման կայանքի շահագործումը դադարեցվում է և անձնակազմը տեղափոխվում է անվտանգ վայր:
- Հրդեհի և արտադրական վթարների ժամանակ հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, միացվում է հակահրդեհային ջրի համակարգը, անձնակազմը տեղափոխվում է անվտանգ վայր:
- Հակահրդեհային միջոցառումների շարքում նախատեսվում է ձուլարանի տարածքում ունենալ կրակմարիչներ, քահեր, հրշեջ հիդրանտ:

Անբարենպաստ օդերևույթաբանական պայմանների (քամու արագության նվազեցում, անհողմություն, մառախուղ) մասին հաղորդագրություն ստանալուց հետո կատարվում են հետևյալ գործողությունները (միջոցառումները).

- I կարգի վտանգի (զգուշացման) ժամանակ խստացվում է ձուլարանի արտադրական գործընթացների հսկողությունը,
- II կարգի վտանգի ժամանակ սահմանափակվում է արտադրողականությունը,
- III կարգի վտանգի ժամանակ դադարեցվում է ձուլման գործընթացը:

Անբարենպաստ օդերևույթաբանական պայմանների միջոցառումները իրականացվում են անմիջապես ձուլարանի անվտանգության պատասխանատուի կամ նրան փոխարինող անձի կողմից:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագիր

<i>Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Մոնիթորինգի գործողություններ</i>	<i>Արտաքին վերահսկողություն</i>
<p>Ձուլարանի շահագործում</p>	<p>ա/ Մթնոլորտային օդի աղտոտում</p> <p>բ/Թափոնների կառավարում</p> <p>գ/ Աշխատանքի անվտանգություն, աշխատանքային պայմաններ</p>	<p>Մետաղի ջարդոնը տեղափոխել ծածկված թափքերով ավտոտրանսպորտային միջոցներով</p> <p>Թափոնները պահեստավորել փակ շինության մեջ</p> <p>Պարբերաբար ստուգել գազափոշեմաքրման համակարգի աշխատանքը</p> <p>Արտադրական թափոնները հավաքել և կրկնակի օգտագործել՝ խառնելով ջարդոնի նոր ծավալների հետ</p> <p>Կենցաղային աղբի առանձին հավաքման տեղի կահավորում, աղբամանների տեղադրում աշխատակիցների հանգստյան տեղերում և սննդի ընդունման կետերում: Կանոնավոր աղբահանում:</p> <p>Աշխատակազմը պետք է ունենա խմելու ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ:</p> <p>Ձուլարանի տարածքում պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ:</p> <p>Աշխատակազմը պետք է ապահովվի արտահագուստով և անձնական անվտանգության անհրաժեշտ միջոցներով: Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և</p>	<p>Կազմակերպել տարածքի աղտոտվածության մոնիթորինգ, չափելով ածխածնի և ազոտի օքսիդների, փոշու պարունակությունը</p> <p>Տեսչական ստուգումներ</p>	<p>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին</p> <p>Երևանի քաղաքապետարան</p> <p>ԱՆ առողջապահական տեսչական մարմին</p> <p>ԱԲՆ պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն</p>

<i>Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Մոնիթորինգի գործողություններ</i>	<i>Արտաքին վերահսկողություն</i>
		<p>պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի վերահսկողություն, հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:</p> <p>Ձուլարանի տարածքում պետք է լինեն հրդեհային անվտանգության պարագաներ՝ կրակմարիչներ, բահեր,</p>		